

**Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2012/27/ԵՄ հրահանգը
կիրառելիս էլեկտրական եւ ջերմային էներգիայի առանձին
արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ
արժեքները վերանայող եւ Հանձնաժողովի 2011/877/ԵՄ
կիրարկող որոշումն ուժը կորցրած ճանաչող՝
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 թվականի հոկտեմբերի 12-ի
2015/2402 ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով 2009/125/ԵՀ եւ 2010/30/ԵՄ հրահանգները փոփոխող եւ
2004/8/ԵՀ եւ 2006/32/ԵՀ¹ հրահանգները եւ մասնավորապես՝ դրա 14(10)
հոդվածի երկրորդ ենթապարբերությունն ուժը կորցրած ճանաչող՝
«էներգաարդյունավետության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի
2012 թվականի հոկտեմբերի 25-ի 2012/27/ԵՄ հրահանգը,

քանի որ՝

- 1) համաձայն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004/8/ԵՀ հրահանգի
4(1) հոդվածի² Հանձնաժողովն իր 2011/877/ԵՄ կիրարկող որոշման³ մեջ
սահմանել է էլեկտրական եւ ջերմային էներգիայի առանձին արտադրության
արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքներ՝ որպես ըստ

¹ ՊՏ L 315, 14.11.2012թ., էջ 1:

² էներգիայի ներքին շուկայում օգտակար ջերմային էներգիայի պահանջարկի հիման վրա
համակցված արտադրության խթանման մասին եւ 92/42/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական
պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի 2004/8/ԵՀ հրահանգ (ՊՏ L 52,
21.02.2004թ., էջ 50):

³ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004/8/ԵՄ հրահանգը կիրառելիս էլեկտրական եւ
ջերմային էներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ
արժեքները սահմանող եւ Հանձնաժողովի 2007/74/ԵՀ որոշումն ուժը կորցրած ճանաչող
Հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 19-ի 2011/877/ԵՄ կիրարկող որոշում (ՊՏ L 343,
23.12.2011թ., էջ 91):

համապատասխան գործոնների, այդ թվում՝ կառուցման տարվա եւ վառելիքի տեսակների տարբերակված արժեքների մատրիցա: Այդ արժեքները կիրառելի են մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը.

- 2) Հանձնաժողովը վերանայել է էլեկտրական եւ ջերմային էներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները՝ հաշվի առնելով անդամ պետությունների եւ շահագրգիռ անձանց կողմից տրամադրված՝ իրական պայմաններում շահագործման տվյալները: 2011-2015 թվականներն ընկած վերանայման ժամանակահատվածում դիտարկված լավագույն հասանելի եւ տնտեսապես նպատակահարմար տեխնոլոգիաների զարգացման արդյունքում 2011/877/ԵՄ որոշմամբ սահմանված տարբերությունները, կապված համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվա հետ, պետք է պահպանվեն՝ կապված էլեկտրաէներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքների հետ .
- 3) արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքների վերանայումը հաստատել է, որ, ելնելով վերջին փորձից եւ վերլուծությունից, կլիմայական պայմաններին վերաբերող շտկման գործակիցները, ինչպես սահմանված է 2011/877/ԵՄ որոշմամբ, պետք է կիրառվեն միայն գազային վառելիք օգտագործող կայանների նկատմամբ.
- 4) վերջին փորձի եւ վերլուծության հիման վրա այդ վերանայմամբ հաստատվել է, որ 2011/877/ԵՄ որոշմամբ սահմանված՝ ցանցերում խուսափած կորուստների դեպքում շտկման գործակիցների կիրառումը պետք է շարունակվի: Խուսափած կորուստներն ավելի լավ արտացոլելու նպատակով անհրաժեշտ է թարմացնել օգտագործված լարման սահմանները եւ շտկման գործակիցների արժեքը.

- 5) վերանայմամբ ստացվել են ապացույցներ՝ ցույց տալու համար, որ արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները որոշ դեպքերում պետք է փոփոխվեն: Առկա սխեմաների հետադարձ փոփոխություններից խուսափելու նպատակով նոմինալ արժեքների նոր համակարգը կիրառվում է միայն 2016 թվականից, մինչդեռ արժեքների ընթացիկ համակարգը պահպանվում է մինչև այդ ամսաթիվը կառուցված կայանների համար: Կլիմայական պայմաններին վերաբերող որևէ շտկման գործակից չի պահանջվել, քանի որ վառելիքից ջերմային էներգիա արտադրելու թերմոդինամիկական էականորեն կախված չէ շրջակա միջավայրի ջերմաստիճանից: Բացի այդ, ցանցերում ջերմային էներգիայի կորուստների շտկման գործակիցներ չեն պահանջվում, քանի որ ջերմային էներգիան միշտ օգտագործվում է արտադրության վայրի մոտակայքում:
- 6) այդ վերանայմամբ ստացվել են ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ գոլորշի կամ տաք ջուր արտադրող ջեռուցման կաթսաների էներգաարդյունավետության նոմինալ արժեքները պետք է տարբերակվեն:
- 7) իրական պայմաններում շահագործման տվյալները ցույց են տվել վերանայման ժամանակահատվածում վառելիքի որոշ տեսակներ օգտագործող ժամանակակից կայանների փաստացի արդյունավետության՝ վիճակագրական առումով կարելու բարելավում:
- 8) անհրաժեշտ են կայուն պայմաններ՝ համակցված արտադրությունում ներդրումներ կատարելու եւ ներդրողների շարունակական վստահության համար: հետեւաբար նպատակահարմար է էլեկտրական եւ ջերմային էներգիայի համար սահմանել համապատասխան ներդաշնակեցված նոմինալ արժեքներ:
- 9) 2011/877/ԵՄ որոշմամբ սահմանված՝ էլեկտրական եւ ջերմային էներգիայի առանձին արտադրության նոմինալ արժեքները կիրառելի են մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը, իսկ նոմինալ նոր արժեքներն անհրաժեշտ է կիրառել 2016 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ ամսաթիվը

նոմինալ նոր արժեքների համակարգի կիրառելիությունն ապահովելու նպատակով ընթացիկ կանոնակարգը պետք է ուժի մեջ մտնի դրա հրապարակմանը հաջորդող առաջին օրը.

10) 2012/27/ԵՄ հրահանգի 14-րդ, 22-րդ եւ 23-րդ հոդվածներով Հանձնաժողովին վերապահվում է էլեկտրական եւ ջերմային էներգիայի առանձին արտադրության ներդաշնակեցված նոմինալ արժեքները թարմացնող պատվիրակված ակտեր ընդունելու լիազորություն: Լիազորության պատվիրակումը Հանձնաժողովին վերապահվում է 2012 թվականի դեկտեմբերի 4-ից՝ հինգ տարի ժամկետով: 2017 թվականի դեկտեմբերի 4-ից հետո լիազորության պատվիրակումը չերկարաձգելու իրավիճակից խուսափելու նպատակով սույն կանոնակարգով սահմանված նոմինալ արժեքները կշարունակվեն լինել կիրառելի: Եթե Հանձնաժողովին միջանկյալ ժամանակահատվածում տրվեն նոր պատվիրակված լիազորություններ, ապա Հանձնաժողովի նպատակն է վերանայել սույն կանոնակարգով սահմանված նոմինալ արժեքները՝ դրանք ուժի մեջ մտնելուց ամենաուշը չորս տարի հետո .

11) 2012/27/ԵՀ հրահանգը միտված է խթանել համակցված արտադրությունը՝ էներգիա խնայելու նպատակով, հետեւաբար պետք է լինի խթան՝ համակցված արտադրության ավելի հին կայանքներն արդիականացնելու համար՝ դրա էներգաարդյունավետությունը բարելավելու նպատակով: Այդ պատճառներով եւ արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքներին, որոնք պետք է հիմնված լինեն 2012/27/ԵՄ հրահանգի II(գ) հավելվածում նշված սկզբունքների վրա, ներկայացված պահանջին համապատասխան՝ համակցված արտադրության կայանքի նկատմամբ կիրառելի՝ էլեկտրաէներգիայի արդյունավետության նոմինալ արժեքները պետք է աճեն՝ դրա կառուցման տարվան հաջորդող տասնմեկերորդ տարվանից սկսած,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Արդյունավետության

ներդաշնակեցված նոմինալ արժեքների սահմանումը

Էլեկտրական եւ ջերմային էներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները ներկայացված են համապատասխանաբար I եւ II հավելվածներում:

Հոդված 2

Էլեկտրաէներգիայի առանձին արտադրության արդյունավետության

ներդաշնակեցված նոմինալ արժեքների շտկման գործակիցները

1. Անդամ պետությունները պետք է կիրառեն III հավելվածով սահմանված շտկման գործակիցները՝ I հավելվածով նախատեսված՝ արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները յուրաքանչյուր անդամ պետության տարածքում կլիմայական միջին պայմաններին հարմարեցնելու նպատակով:

Եթե անդամ պետության տարածքում պաշտոնական օդերեութաբանական տվյալները ցույց են տալիս շրջակա միջավայրի տարեկան ջերմաստիճանի 5 °C կամ ավելի տարբերություններ, ապա այդ անդամ պետությունը կարող է առաջին ենթապարբերության նպատակով օգտագործել կլիմայական մի քանի գոտիներ՝ օգտագործելով III հավելվածով սահմանված մեթոդը, որը ենթակա է ծանուցման Հանձնաժողովին:

2. Անդամ պետությունները պետք է կիրառեն IV հավելվածով սահմանված շտկման գործակիցները՝ I հավելվածով սահմանված՝ արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները ցանցերում խուսափած կորուստներին հարմարեցնելու նպատակով:

3. Եթե անդամ պետությունը կիրառում է ինչպես III, այնպես էլ IV հավելվածով սահմանված շտկման գործակիցները, ապա այն նախքան IV հավելվածը կիրառելը պետք է կիրառի III հավելվածը:

Հոդված 3

Էլեկտրաէներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքների կիրառումը

1. Անդամ պետությունները պետք է կիրառեն I հավելվածով սահմանված՝ արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները՝ կապված համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվա հետ: Արդյունավետության այդ ներդաշնակեցված նոմինալ արժեքները կիրառելի են տասը տարի՝ համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվանից:

2. Համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվան հաջորդող տասնմեկերորդ տարվանից սկսած՝ անդամ պետությունները պետք է կիրառեն արդյունավետության ներդաշնակեցված այն նոմինալ արժեքները, որոնք 1-ին պարբերության ուժով կիրառվում են տասը տարվա համակցված արտադրության տեղակայանքի նկատմամբ: Արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները կիրառելի են մեկ տարի:

3. Սույն հոդվածի նպատակներով՝ համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարի է համարվում օրացուցային այն տարին, որի ընթացքում տեղակայանքն առաջին անգամ էլեկտրաէներգիա է արտադրում:

Հոդված 4

Ջերմային էներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքների կիրառումը

1. Անդամ պետությունները պետք է կիրառեն II հավելվածով սահմանված՝ ներդաշնակեցված նոմինալ արժեքները՝ կապված համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարվա հետ:
2. Սույն հոդվածի նպատակներով՝ համակցված արտադրության տեղակայանքի կառուցման տարի է համարվում 3-րդ հոդվածի նպատակով կառուցման տարին:

Հոդված 5

Համակցված արտադրության տեղակայանքի արդիականացումը

Եթե համակցված արտադրության տեղակայանքի վերազինման հետ կապված ներդրումային ծախսը գերազանցում է համեմատելի համակցված արտադրության նոր տեղակայանքի հետ կապված ներդրումային ծախսի 50%-ը, ապա 3-րդ եւ 4-րդ հոդվածների նպատակով համակցված արտադրության արդիականացված տեղակայանքի կառուցման տարի է համարվում այն օրացուցային տարին, որի ընթացքում համակցված արտադրության արդիականացված տեղակայանքն առաջին անգամ էլեկտրաէներգիա է արտադրում:

Հոդված 6

Վառելիքի խառնուրդը

Եթե համակցված արտադրության տեղակայանքը շահագործվում է մեկից ավելի տեսակի վառելիքով, ապա առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները պետք է կիրառվեն տարբեր վառելիքի ծախսած էներգիայի համար հաշվարկված միջինին համաչափորեն:

Հոդված 7

Ուժը կորցրած ճանաչելը

2011/877/ԵՄ որոշումն ուժը կորցրած է ճանաչվում:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելը եւ կիրառումը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակմանը հաջորդող առաջին օրը:

Սույն կանոնակարգը կիրառվում է 2016 թվականի հունվարի 1-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2015 թվականի հոկտեմբերի 12-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժան-Կլոդ ԶՈՒՆԿԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Էլեկտրաէներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները (նշված 1-ին հոդվածում)

Ստորեւ բերված աղյուսակում էլեկտրակաէներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները հիմնված են այրման նվազագույն ջերմատվության եւ ԻՍՕ ստանդարտ օդերեւութաբանական պայմանների վրա (շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ 15 °C , ճնշումը՝ 1,013 բար, օդի հարաբերական խոնավությունը՝ 60 %):

Կատեգորիան		Վառելիքի տեսակը	Կառուցման տարին		
			Մինչեւ 2012 թվականը	2012-2015 թվականները	2016 թվականից սկսած
Պինդ նյութեր	S1	Քարածուխ, այդ թվում՝ անթրացիտ, բիտումային ածուխ, ենթաբիտումային ածուխ, կոքս, կիսակոքս, նավթային կոքս	44,2	44,2	44,2
	S2	Լիգնիտ, լիգնիտի բրիկետներ, թերթաքարային նավթ	41,8	41,8	41,8
	S3	Տորֆ, տորֆային բրիկետներ	39,0	39,0	39,0
	S4	Չոր կենսազանգված, այդ թվում՝ փայտանյութ եւ այլ պինդ կենսազանգված, այդ թվում՝ փայտի հատիկներ եւ բրիկետներ, փայտի չորացրած տաշեղներ, փայտի մաքուր եւ չոր թափոններ, ընկուզեղենի կեղեւներ եւ ձիթենու ծառից ստացված փայտանյութ եւ այլ քարեր	33,0	33,0	37,0
	S5	Այլ պինդ կենսազանգված, այդ թվում՝ S4 խմբում չընդգրկված բոլոր փայտանյութերը, ինչպես նաեւ սեւ եւ գորշ հալույթ	25,0	25,0	30,0
	S6	Քաղաքային եւ արդյունաբերական թափոններ (չվերականգնվող) եւ վերականգնվող/կենսաքայքայվող թափոններ	25,0	25,0	25,0
Հեղուկ	L7	Ծանր նավթ, թեթեւ դիզելային/դիզելային վառելիք, այլ նավթամթերք	44,2	44,2	44,2
	L8	Կենսահեղուկներ, այդ թվում՝ կենսամեթանոլ,	44,2	44,2	44,2

Կատեգորիան	Վառելիքի տեսակը	Կառուցման տարին			
		Մինչև 2012 թվականը	2012-2015 թվականները	2016 թվականից սկսած	
L9	Կենսաէթանոլ, կենսաբուրբանոլ, կենսադիզել եւ այլ կենսահեղուկներ Հեղուկ թափոններ, այդ թվում՝ կենսաքայքայվող եւ չվերականգնվող թափոններ (այդ թվում՝ թալիումի յուղ, ճարպ եւ գարեջրի տակուձք)	25,0	25,0	29,0	
Գազային	G10	Բնական գազ, ՀՆԳ, ՀԲԳ եւ կենսամեթան	52,5	52,5	53,0
	G11	Նավթագործարանային գազեր, ջրածնային եւ սինթետիկ գազ	44,2	44,2	44,2
	G12	Անաէրոբ խմորումից, աղբավայրերի եւ կեղտաջրերի մաքրումից արտադրվող կենսագազ	42,0	42,0	42,0
	G13	Կոքսային գազ, դոմնային գազ, հանքային գազ եւ վերականգնված այլ գազեր (բացառությամբ նավթագործարանային գազերի)	35,0	35,0	35,0
Այլ	O14	Արտանետվող ջերմային էներգիա (այդ թվում՝ բարձր պոտենցիալով տեխնոլոգիական արտանետված գազեր, որոնք էկզոթերմիկ քիմիական ռեակցիաների արդյունք են) Միջուկային			30,0
	O15				33,0
	O16	Արեաջերմային			30,0
	O17	Երկրաջերմային			19,5
	O18	Վերելում չնշված այլ վառելիքներ			30,0

ՀԱՎԵԼՎԱԾ II

Ջերմային էներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները (նշված 1-ին հոդվածում)

Ստորև բերված աղյուսակում էլեկտրաէներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքները հիմնված են այրման նվազագույն ջերմատվության եւ ԻՍՕ ստանդարտ օդերեութաբանական պայմանների վրա (շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ 15 °C , ճնշումը՝ 1,013 բար, օդի հարաբերական խոնավությունը՝ 60 %):

Կատեգորիան	Վառելիքի տեսակը՝	Կառուցման տարին						
		Մինչեւ 2016 թվականը			2016 թվականից սկսած			
		Տաք ջուր	Գոլորշի*	Արտանետվող գազերի անմիջական օգտագործում**	Տաք ջուր	Գոլորշի*	Արտանետվող գազերի անմիջական օգտագործում**	
Պինդ նյութեր	S1	Քարածուխ, այդ թվում՝ անթրացիտ, բիտումային ածուխ, ենթաբիտումային ածուխ, կոքս, կիսակոքս, նավթային կոքս	88	83	80	88	83	80
	S2	Լիգնիտ, լիգնիտի բրիկետներ, թերթաքարային նավթ	86	81	78	86	81	78
	S3	Տորֆ, տորֆային բրիկետներ	86	81	78	86	81	78
	S4	Չոր կենսազանգված, այդ թվում՝ փայտանյութ եւ այլ պինդ կենսազանգված, այդ թվում՝ փայտի հատիկներ եւ բրիկետներ, փայտի չորացրած տաշեղներ, փայտի մաքուր եւ չոր թափոններ, ընկուզենու կեղեւներ եւ ձիթենու ծառից ստացված փայտանյութ եւ այլ քարեր	86	81	78	86	81	78
	S5	Այլ պինդ կենսազանգված, այդ թվում՝ S4 խմբում չընդգրկված բոլոր փայտանյութերը, ինչպես նաեւ սեւ եւ գորշ հալույթ	80	75	72	80	75	72

Կատեգորիան	Վառելիքի տեսակը՝	Կառուցման տարին						
		Մինչև 2016 թվականը			2016 թվականից սկսած			
		Տաք ջուր	Գոլորշի*	Արտանետվող գազերի անմիջական օգտագործում**	Տաք ջուր	Գոլորշի*	Արտանետվող գազերի անմիջական օգտագործում**	
S6	Քաղաքային եւ արդյունաբերական թափոններ (չվերականգնվող) եւ վերականգնվող/կենսաքայքայվող թափոններ	80	75	72	80	75	72	
Հեղուկներ	L7	Ծանր նավթ, թեթև դիզելային/դիզելային վառելիք, այլ նավթամթերք	89	84	81	85	80	77
	L8	Կենսահեղուկներ, այդ թվում՝ կենսամեթանոլ, կենսաէթանոլ, կենսաբութանոլ, կենսադիզել եւ այլ կենսահեղուկներ	89	84	81	85	80	77
	L9	Հեղուկ թափոններ, այդ թվում՝ կենսաքայքայվող եւ չվերականգնվող թափոններ (այդ թվում՝ թալիումի յուղ, ճարպ եւ գարեջրի տակուժք)	80	75	72	75	70	67
Գազային	G10	Բնական գազ, ՀՆԳ, ՀԲԳ եւ կենսամեթան	90	85	82	92	87	84
	G11	Նավթագործարանային գազեր, ջրածնային եւ սինթետիկ գազ	89	84	81	90	85	82
	G12	Անաէրոբ խմորումից, աղբավայրերի եւ կեղտաջրերի մաքրումից արտադրվող կենսագազ	70	65	62	80	75	72
	G13	Կոքսային գազ, դոմնային գազ, հանքային գազ եւ վերականգնված այլ գազեր (բացառությամբ նավթագործարանային գազերի)	80	75	72	80	75	72
Այլ	O14	Արտանետվող ջերմային էներգիա (այդ թվում՝ բարձր պոտենցիալով տեխնոլոգիական արտանետված գազեր, որոնք էկզոթերմիկ քիմիական ռեակցիաների արդյունք են)	—	—	—	92	87	—
	O15	Միջուկային	—	—	—	92	87	—

Կատեգորիան	Վառելիքի տեսակը՝	Կառուցման տարին					
		Մինչև 2016 թվականը			2016 թվականից սկսած		
		Տաք ջուր	Գոլորշի*	Արտանետվող գազերի անմիջական օգտագործում**	Տաք ջուր	Գոլորշի*	Արտանետվող գազերի անմիջական օգտագործում**
016	Արեաջերմային	—	—	—	92	87	—
017	Երկրաջերմային	—	—	—	92	87	—
018	Վերետում չնշված այլ վառելիքներ	—	—	—	92	87	—

* Եթե գոլորշու կայանքների՝ իրենց ջերմային արդյունավետության ՋԷԷՄ հաշվարկներում հաշվի չի առնվում խտուցքի վերադարձը, ապա վերը նշված աղյուսակում ներկայացված գոլորշու արդյունավետությունը պետք է աճի 5 տոկոսային կետով:

* Պետք է օգտագործվեն արտանետվող գազերի անմիջական օգտագործման արժեքները, եթե ջերմաստիճանը 250 °C է կամ դրանից բարձր:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Շտկման գործակիցները՝ կապված էլեկտրական էներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքների կիրառման համար միջին կլիմայական պայմանների եւ կլիմայական գոտիներ սահմանելու մեթոդների հետ

(նշված 2(1) հոդվածում)

ա) Շտկման գործակիցները՝ կապված միջին կլիմայական պայմանների հետ.

շրջակա միջավայրի ջերմաստիճանի շտկումը հիմնված է անդամ պետության տարածքում տարեկան միջին ջերմաստիճանի եւ H_2O ստանդարտ մթնոլորտային պայմանների ($15\text{ }^\circ\text{C}$) միջեւ եղած տարբերության վրա:

Շտկումը կատարվում է հետեւյալ եղանակով՝

$15\text{ }^\circ\text{C}$ -ից բարձր յուրաքանչյուր աստիճանի համար՝ 0,1 տոկոսային կետ արդյունավետության կորուստ.

$15\text{ }^\circ\text{C}$ -ից ցածր յուրաքանչյուր աստիճանի համար՝ 0,1 տոկոսային կետ արդյունավետության աճ:

Օրինակ՝

Երբ անդամ պետության տարածքում տարեկան միջին ջերմաստիճանը $10\text{ }^\circ\text{C}$ է, ապա տվյալ անդամ պետության տարածքում համակցված արտադրության տեղակայանքի նոմինալ արժեքը պետք է աճի 0,5 տոկոսային կետով.

բ) շրջակա միջավայրի ջերմաստիճանի շտկումը կիրառվում է միայն գազային վառելիքների նկատմամբ (G10, G11, G12, G13).

գ) կլիմայական գոտիներ սահմանելու մեթոդները.

յուրաքանչյուր կլիմայական գոտու սահմանները կազմվում են շրջակա միջավայրի տարեկան միջին ջերմաստիճանի իզոթերմերով (ամբողջական Ցելսիուսի աստիճանով), որոնք տարբերվում են առնվազն 4 °C-ով: Հարակից կլիմայական գոտիներում կիրառվող շրջակա միջավայրի տարեկան միջին ջերմաստիճանների տարբերությունն առնվազն 4 °C է:

Օրինակ՝

Եթե, օրինակ, տվյալ անդամ պետության դեպքում որոշակի վայրում շրջակա միջավայրի տարեկան միջին ջերմաստիճանը 12 °C է, իսկ նրա տարածքի մեկ այլ վայրում՝ 6 °C, ապա անդամ պետությունն ունի 9 °C իզոթերմով բաժանված երկու կլիմայական գոտի ներկայացնելու տարբերակ՝

9 °C եւ 13 °C իզոթերմերի միջակայքում (4 °C տարբերությամբ) գտնվող առաջին կլիմայական գոտի, որի շրջակա միջավայրի տարեկան միջին ջերմաստիճանը 11 °C է, եւ

5 °C եւ 9 °C իզոթերմերի միջակայքում գտնվող երկրորդ կլիմայական գոտի, որի շրջակա միջավայրի տարեկան միջին ջերմաստիճանը 7 °C է:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

**Էլեկտրական էներգիայի առանձին արտադրության
արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքների կիրառման
համար ցանցերում խուսափած կորուստների շտկման գործակիցները
(նշված 2(2) հոդվածում)**

Մուտքային լարման մակարդակը	Շտկման գործակիցը (ցանցի սահմաններից դուրս)	Շտկման գործակիցը (ցանցի սահմաններում)
≥345կՎ	1	0,976
≥ 200 - < 345 կՎ	0,972	0,963
≥ 100 - < 200 կՎ	0,963	0,951
≥ 50 - < 100կՎ	0,952	0,936
≥ 12 - < 50 կՎ	0,935	0,914
≥ 0,45 - < 12կՎ	0,918	0,891
< 0,45 կՎ	0,888	0,851

Օրինակ՝

100 էլեկտրական կՎտ հզորությամբ բնական գազով աշխատող մխոցային շարժիչով համակցված արտադրության տեղակայանքն արտադրում է 380 Վ էներգիա: Դրա 85 %-ն օգտագործվում է սեփական սպառման համար, իսկ 15 %-ով սնվում է ցանցը: Կայանքը կառուցվել է 2010 թվականին: Շրջակա միջավայրի տարեկան միջին ջերմաստիճանը 15 °C է (այսպիսով՝ կլիմայական շտկման անհրաժեշտություն չկա):

Ցանցի կորուստը շտկելուց հետո դրա արդյունքում համակցված արտադրության այս տեղակայանքում էլեկտրական էներգիայի առանձին արտադրության արդյունավետության ներդաշնակեցված նոմինալ արժեքը (հիմնվելով սույն հավելվածում նշված գործակիցների հաշվարկված միջինի վրա) կլինի՝

$$\text{Նոմ էդ} = 52,5 \% \times (0,851 \times 85 \% + 0,888 \times 15 \%) = 45,0 \%$$